եւ ամէն մի դուռը կը ներկայացնէր մի քարէ ամրոց։ Վրաց երկրում շինեց Սուղդարիլ քաղաքը, իբրեւ թշնամեաց դէմ դիտանոց, եւ բնակեցրեց այնտեղ Սուղդի եւ Պարսկաստանի բնակիչներից։ Յունաց սահմանագլխի վերայ շինեց Դուռն Պերոզակաւատ, Դ. Լազիքայ[1] եւ Դ. Բարքայ ամրոցները, վերջինս Տրապիզոնի ծովի վերայ, Դ. Ալանաց եւ Դ. Սամախի[2], Գարդման[3] եւ Շամշուլդէ[4] ամրոցները։

Անուշիրվան նուաճեց Հայաստանի ամբողջ այն մասը, որ Յունաց ձեռքումն էր, ծաղկեցրեց եւ ամրացրեց Դուին քաղաքը, շինեց Նախճաւան[5] քաղաքը Վասպուրականում, եւս Վայոց[6] ամրոցը. Սիսականում կանգնեցրեց բերդեր, ի թիւս որոց Կիլաք եւ Շահապոնից[7], ուրտեղ բնակեցրեց քաջ եւ երեւաւոր մարդիկ Սիսականից։

---

1 Մ. Խորենացի՝ Լազիկա։ *Λᾶζαι* (Ptol. V, 10).

2 سَمْخي = Սամցխէ (Սոմխէթ) ի Վիրս։

3 յՈւտի։

4 Կամ Օրբէթ ի Տաշիր Գուգարաց։

5 النَشَوى (Նաշաւայ) و եւս نخجوان, نقجوان (Jakut). *Ναξουάνα* (Ptol.) Շինել բառը շատ անգամ ըմբռնելու է վերանորոգել իմաստով։

6 Բնագրում وَيْص = Վայոց ձոր։ Մութ է անունիս ծագումը. Թերեւս նոյնն է լեառն Uauš Մաննացոց երկրում, ուրտեղ Սարգոն 716թ. յաղթեց ուրարտացի Ռուսային։ Նորա մօտերքը կը յիշուին Su-uk-ki-a եւ Bala տեղիք, որոնք կը համապատասխանեն մեր Ճահուկ եւ Բաղք գաւառներին Սիւնիքում։ Յայտ է, որ Մաննացոց երկիրը իւր մէջ կ'առնէր մի ժամանակ Սիւնեաց աշխարհի մի մասը։ (Համմ. Մննէ գ.. Մէնէ+ Ստեփ. Օրբել.)։

7 Բնագրում ساهیونس թուի թէ կէտադրութիւնն սխալ է. ուղղելու է سَاهَبُونْس.